

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՆԱՄԱԿՆԵՐ

Պայծառաշուք պայտագատ Աղա Կարապետ Յայրապետեանց

ԱԶԳԱԾՔԻ ԻՇԽԱՆ

Հոգի հայրենասէր, դուք Խրիմեանին և Խրիմեան ծեղ
քաջաձանօթ էք, 1861-ին մինչդեռ Հայաստանի Աղծիւլը տփ-
խիսի բէմերու վրայ հայրենասիրութիւն կը քարոզէր այն օրէն
ահա ծեր համբաւ և վարկութիւն արծանագրուած է առ Մեզ։
Ալդ հէք Արծուին, այդ անծնանուէր վարդապետի հուր կը թափառի
այժմ գիտէք արդեօք։ Ահաւասիկ ծայն կուտամ ծեղ, տարօնոյ
աշխարհ, Մշց սուրբ Կարապետի Վանուց մէջ ամենայն աշխատու-
թեամբ կը տքնի այդ վանք, այդ մեր նախնեաց 1500 տա-
րուան վաղեթի լիշտատակը վերանորոգել նիւթական և միան-
գամայն բարոյական շինուածով։

Մեր այս ծեռնարկութեան սատար և օժանդակ ծեռն
ոյք են, եթէ ոչ նախիշեանցի բարեկօժար ազգայինք։ Ուստի
յանուն սուրբ Կարապետի Վանուց բարեպաշտ գումար մի պատ-
րաստելով զրկնցի տեղւոյդ վսեմ քաղաքապետին ծեռք և քանի
մի գլխաւոր անծանց հարկ եղած նամակները ուղղեցի, այս
ծեռնարկութեան մէջ կաղաչեմ ով բարեացակամիշխան սրչափ
հնար է ծեր լորդոր և աղդեցութիւն ՚ի գործ դնելու շնորհ
լընէք, թերեւս բաւական Գումար մի հայթայթուելով սուրբ

կարապետի Վանուց վերանորոգութեան ոկղնաւորութիւն աւար-
տի որ այն իսկ է ընդհանուր ազգին փախազը և մեր նպատակը:

Որով կ' թամ ծեզ և Հալրապետեան գերդաս-
տանին Աղօթանուէր առ տէր

1869 յունիս 7
ի սուրբ Կարապետի վանս

պատօսնեայ գլու վանից
Մկրտիչ վ. Խոհիմեան
նպիս. Տարոնոյ

Այս թուղթը մենք ստացել ենք Նոր-Նախիջևանցի պ. Կա-
րապետ Թիթրեանից, որ իրեւ Հայրապետեանի փեսայ միջոց է
ունեցել աշքի անցկացնել հանգուցեալի թղթերը և այս նամակը
գտել, յանձնել է մեզ, իրաւունք տալով հարկաւոր համարուած
դէպքում հրատարակութեան տալու դրան.

Հայրապետեանցը Նոր-Նախիջևանի քաղաքագլուխ և Միքա-
յէլ Նալբանդեանցի մտերիմ բարեկամ յայտնի Կարապետ Հայրա-
պետեանցն է, որ իւր ժամանակ մեծ դեր է խաղացել Նոր-Նախի-
ջևանի և Նալբանդեանցի կեանքում իրեւ հակառակորդ Խալիբեան
դպրոցի հիմնադիր Յարութիւն Խալիբեանի և պաշտպան ու կու-
սակից Տէր Գաբրիէլ Պատկանեանցի և Նալբանդեանցի:

Ուշադրութեան արժանի կէտը այս թղթի մէջ, բացի
գրութեան առանձնայատուկ ոճից ու ձեկից, այն է, որ,
նախ, Գլակայ վանից պաշտօնեայ, Եպիսկոպոս Տարօնոյ Մկրտիչ
վարդապետ Խշիմեանը իրան կոչում է ոչ սովորական «Արծիւ
Վասպուրականի», այլ «Արծիւ Հայաստանի» և, երկրորդ, որ այդ
«Հէք Արծուին» ինքն իւր բերանով իւր համար վկայում է, թէ
ինքն «անձնուէր վարդապետ» է:

1910 թ. նոյեմբ. 28.

Ե. Շահազիդ

Նոր-Նախիջևան: